

Հարցազրոյց Տիկին Արսինէ Ադդարեանի հետ



1.- Տիկին Ադդարեան, դուք տարիներով ատենապետութիւնը ստանձնած էք ՀԲԸՄ-ի Մոնթրէալի Մշակութային Յանձնախումբին: Ի՞նչ յատկանշական ձեռնարկներ կը յիշէք:

ՀԲԸՄ Մշակութային Յանձնախումբի ատենապետութեանս ժամանակաշրջանը սկսած է 1998էն մինչեւ այս օրերս: Ամբողջ տասը տարուան աշխատանքի շրջանս

եղաւ լեցուն եւ յատկանշական ձեռնարկներով, որոնց յաջողութեան բաժինը կ'երթայ իմ բացառիկ գործընկերներուս, ինչպէս Տիկին Սիլվա Մանկասարեան, Դոկտ. Հերմինէ Ճանճանեան, Տէր եւ Տիկին Պօղոս եւ Սիրվարդ Քիշեաններ, Տիկին Սօնիա Գարակեօզեան, Տիկին Շուշան Արիսեան եւ յետագային ասոնց միացան Պրն. Ռաֆֆի Շիթիլեան եւ Օր. Շուշանիկ Մելքոնեան: Գալով ամենայատկանշան ձեռնարկներուն՝ հետեւեալներն են:

ա.- Չարենցի 100-ամեակի գեղարուեստական ծրագիրը, կատարող՝ Օր. Շուշանիկ Մելքոնեան:

բ.- Երգչուհի Տաթևիկ Յովհաննէսեանի ճագային համերգը 2001 թուականի ամառը:

գ.- Միջազգային ջութակահար ժան Տէր Մերկերեանի երկու համերգները:

դ.- Կոմիտասի 100-ամեակի դասախօսական եւ համերգային հանդիսութիւնները. կատարող՝ Փրոֆ. Խաչիկ Փիլիկեան:

ե.- «Դար մը գրականութիւն» Գրքի ցուցահանդէս՝ նուիրուած Գարեգին Ա. Վեհափառի վախճանման յիշատակին:

զ.- Թատերական երկու ներկայացումներ. կատարող՝ Գրիգոր Սաթամեան:

է.- Գեղարուեստական համերգ. կատարողներ՝ Կարօ Նշանեան եւ Էլլադա Չախոյան:

ը.- Գրական գեղարուեստական երեկոյ նուիրուած Արմէն Դարեանի մահուան 10-ամեակին. կատարողներ՝ Փրոֆ. Խաչիկ Փիլիկեան եւ գաղութիս ասմունքողները:

թ.- 100-ամեակի փակման մենահամերգ. կատարող՝ երիտասարդ երգչուհի Ծուլիէթթա Գալուստեան:

2 . Ափիւռքէն ներս հայ մշակոյթը առաջին զոհն է ծուլումին, ձեր կազմակերպած ձեռնարկները ինչպիսի՞ ընդունելութիւն կը գտնեն ժողովուրդին մօտ ընդհանրապէս եւ յատկապէս երիտասարդութեան մօտ:

Դժբաղդաբար նկատողութիւնը ճիշդ է որ միշտ չէ որ բարձր գեղարուեստական մակարդակի ծրագիրը նուազ ունկնդրող կ'ունենայ եթէ այստեղ ունինք նիւթական ակնկալութիւն: Սակայն իմ կարծիքովս

քանակը չի որոշեր արժեքը՝ այլ որակը. եւ ուրեմն եթէ մեր ծրագիրներով կարողացած ենք ժողովուրդին որակը բարձրացնել՝ ուրեմն յաջողած ենք մեր առաքելութեան մէջ, կոչուելով Մշակութային Յանձնախումբ:

3.- Հայրենիքը վատահաբար մեծ ներդրում ունի հայ մշակոյթը զարգացնելու սփիւռքէն ներս: Ի՞նչ է ձեր նկատողութիւնը այս հարցին ուղղութեամբ:

Այո՛, Հայաստանը մեծ դեր ունի սփիւռքի մշակոյթը բարձր պահելու համար: Նկատի առնելով որ այս ցամաքամասին վրայ կը գտնուինք ուր ամէն տեսակի մշակոյթ գոյութիւն ունի, մենք պէտք է գիտնանք լաւ ընտրութիւններ կատարել՝ երբ կը մտածենք Հայաստանէն գեղարուեստական ծրագիրներու գործադրման մասին: Դժբաղդաբար տեղւոյն հոսանքները, նկատի առնելով մակարդակը, այն չէ ինչ որ կ'սպասուի հայրենիքէն, որովհետեւ միշտ նոյն ասացուածքը կը ծանծանուի թէ «ժողովուրդը այս կը պահանջէ»: Իմ կարծիքովս ժողովուրդին մակարդակը բարձրացնել է եւ ոչ հակառակը: Եւ եթէ ժողովուրդին լաւ ծրագիրներ հրամցնես՝ բնաւ չի մերժեր. փաստը վերը յիշուած մշակութային ձեռնարկներն են որոնք բոլորն ալ բարձր գնահատուեցան մեր խումբերամ ունկնդիրներէն:

4.- Ի՞նչ դժուարութիւններու կը հանդիպիք մշակութային ձեռնարկներ կազմակերպելու մէջ:

Գլխաւոր դժուարութիւնը որ ունինք կազմակերպչական կողմն է, այսինքն մեկեմասներ ճարել եւ տոնս վաճառել: Դժբաղդաբար տակաւին այդ վարժութիւնը չունինք երթալ տոնս ծախելու, տակաւին այդ փորձառութիւնը ձեռք չենք բերած: Ամէն առիթներով որ ներկայ եղած են տեղական գեղարուեստական ելոյթներու, հայերու ներկայութիւնը եղած է չնչին՝ բաղդատմամբ տեղացիներու, ինչ որ ցաւ կը պատճառէ:

5.- Ի՞նչ ձեռնարկներ իրագործեցիք նախորդ տարուան ընթացքին եւ ի՞նչ կը ծրագրէք յաջորդ տարուան համար:

Նախորդ 2006-2007 տարեշրջանին ունեցանք երեք կարելոր գեղարուեստական ձեռնարկներ, որոնց երկուքը ապրիլեան ոգեկոչումներ՝ ասմունք, երաժշտութիւն, միջոյրոցական տաղանդներու յայտնաբերում ՀԲԸՄ Ալէք Մանուկեան Կեդրոնէն ներս: Իսկ երրորդը՝ ՀԲԸՄի 100-ամեակին փակման համերգն էր՝ քաղաքիս Claude Champagne սրահին մէջ:

Գալով գալիք ծրագիրներուն (2007-2008) հետեւեալներն են

ա.- Փրոֆ. Ռէյմոնտ Գէորգեանի գինեծօն եւ դասախօսութիւններ:

բ.- A.G.B.U. Cinema Network ֆիլմի ակումբի ծրագիր որ կ'սկսի Յունուար 10ին, հիմնուած գիտա-գեղարուեստական վաւերագրութիւններու վրայ:

գ.- Ուիլլիամ Սարոեանի եւ Վիքթոր Համբարձումեանի 100ամեակներու նուիրուած երկու ծրագիր:

դ.- Դասախօսական շարք՝ գործակցութեամբ Հայաստանի դեսպանատան հետ:

ե.- Հայաստանի երկրաշարժին 20ամեակին նուիրուած դասախօսական-գեղարուեստական ծրագիր, զոր նոյնպէս կը մտածենք կազմակերպել Հայաստանի դեսպանութեան հետ:

Եթէ կը կարծէք թէ այս բոլորը բաւական չեն՝ նոր վարչութիւնս եւ ես պատրաստ ենք այլ տեսակ նորութիւններ յղանալու:

Շնորհակալութիւն Տիկին Ադարեան:

Հարցազրոյցը վարեց՝
Ռահել Ուրֆալեան

